# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/10

ք. Երևան «10» փետրվարի 2025թ.

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Վահանյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ազատ Կույումջյան» ԱՁ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Ազատ Կույումջյան -ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ ի (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելո ւպայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1),և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա փետրվարի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.+ Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Մրցակցության պաշտպանության հանձնաժողով | «Ազատ Կոյումջյան» ԱՁ |
| Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4 | Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ավանեսովի 2/25 |
| ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան | «Արարատբանկ» |
| գործառնական վարչություն | Հ/Հ 1510022726810100 |
| Հ/Հ 900011566057 | ՀՎՀՀ 23168191 |
| ՀՎՀՀ 01538354 | |
| Ա. Վահանյան | |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«10» փետրվարի 2025թ. կնքված*
*ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/10 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը* |
| 1 | 50311120/1 | Կատարողը պետք է մատուցի Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հաշվեկշռում առկա պատճենահանող, տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր): Փոխարինված մասերը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Ծառայությունների ցանկը կցվում է Հավելված 1.1-ով: | դրամ | 450 000 | 1 | ՀՀ, ք. Երևան Տիգրան Մեծ 4 | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից, մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մրցակցության պաշտպանության
հանձնաժողով
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ազատ Կույումջյան» ԱՁ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ավանեսովի 2/25
«Արարատբանկ»
Հ/Հ 1510022726810100
ՀՎՀՀ 23168191

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1.1*
*«___» փետրվարի 2025թ. կնքված*
*ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/10 ծածկագրով պայմանագրի*

## Ցանկ

**Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների**

| Հ/Հ | Ծառայությունների և ընթացքում օգտագործվող մասերի և այլ օժանդակ սարքերի անվանումներ | Չափման միավոր | Միավորի գին |
|---|---|---|---|
| 1 | Դիագնոստիկա | դրամ | 0 |
| 2 | Պրոֆիլակտիկա | դրամ | 5000 |
| 3 | Համակարգչի փոշեմաքրում | դրամ | 5000 |
| 4 | BIOS-ի վերածրագրավորում | դրամ | 6000 |
| 5 | BIOS-ի խնդիրների կարգավորում | դրամ | 2000 |
| 6 | BIOS մարտկոցի փոխարինում | դրամ | 1500 |
| 7 | CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը | դրամ | 5000 |
| 8 | Մայրական տպասալի նորոգում | դրամ | 7000 |
| 9 | Մայրական տպասալի փոխարինում ներառյալ տպասալը | դրամ | 35000 |
| 10 | RAM DDR3 4GB-ի փոխարինում 8GB-ով ներառյալ Ram-ը | դրամ | 8000 |
| 11 | RAM DDR3 8GB-ի փոխարինում 16GB-ով ներառյալ Ram-ը | դրամ | 14000 |
| 12 | RAM DDR4 4GB-ի փոխարինում 8GB-ով ներառյալ Ram-ը | դրամ | 19000 |
| 13 | RAM DDR4 8GB-ի փոխարինում 16GB-ով ներառյալ Ram-ը | դրամ | 27000 |
| 14 | HDD 500GB SATA-ի փոխարինում ներառյալ HDD-ին | դրամ | 13000 |
| 15 | SSD 120 GB SATA-ի փոխարինում ներառյալ SSD-ին | դրամ | 14000 |
| 16 | DVD-RW փոխարինում ներառյալ DVD-RW-ն | դրամ | 8000 |
| | **Սնուցման բլոկի փոխարինում՝ ներառյալ բլոկը** | | |

| | | | |
|---|---|---|---|
| | Որից՝ | | |
| 17 | 450W բլոկ | դրամ | 6000 |
| 18 | 550W բլոկ | դրամ | 7000 |
| 19 | 600W բլոկ | դրամ | 9000 |
| 20 | 650W բլոկ | դրամ | 12000 |
| 21 | Ցանցային քարտի փոխարինում ներառյալ քարտը | դրամ | 8000 |
| 22 | Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում, | դրամ | 5000 |
| 23 | Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում, | դրամ | 5000 |
| | **HP 200 All-in-One համակարգչի՝** | | |
| 24 | Դիագնոստիկա | դրամ | 0 |
| 25 | Պրոֆիլակտիկա | դրամ | 8000 |
| 26 | Համակարգչի փոշեմաքրում | դրամ | 6000 |
| 27 | BIOS-ի վերածրագրավորում | դրամ | 15000 |
| 28 | BIOS-ի խնդիրների կարգավորում | դրամ | 5000 |
| 29 | BIOS մարտկոցի փոխարինում | դրամ | 5000 |
| 30 | RAM DDR4 8GB-ի փոխարինում 8GB-ով ներառյալ Ram-ը | դրամ | 24000 |
| 31 | RAM DDR4 8GB-ի փոխարինում 16GB-ով ներառյալ Ram-ը | դրամ | 32000 |
| 32 | M-SSD 240 GB-ի փոխարինում M-SSD 240 GB -ով | դրամ | 24000 |
| 33 | CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը | դրամ | 25000 |
| 34 | Սնուցման բլոկի փոխարինում | դրամ | 16000 |
| 35 | Լարով ստեղնաշարի փոխարինում | դրամ | 5000 |
| 36 | Լարով մկնիկի փոխարինում | դրամ | 3000 |
| | **Համակարգիչ Lenovo All-in-One** | | |
| 37 | Դիագնոստիկա | դրամ | 0 |
| 38 | Պրոֆիլակտիկա | դրամ | 8000 |
| 39 | Համակարգչի փոշեմաքրում | դրամ | 6000 |
| 40 | BIOS-ի վերածրագրավորում | դրամ | 15000 |
| 41 | BIOS-ի խնդիրների կարգավորում | դրամ | 5000 |
| 42 | BIOS մարտկոցի փոխարինում | դրամ | 5000 |

| | | | |
|---|---|---|---|
| 43 | RAM DDR4 16GB-ի փոխարինում 16GB-ով ներառյալ Ram-ը | դրամ | 32000 |
| 44 | M-SSD 500 GB-ի փոխարինում M-SSD 500 GB -ով | դրամ | 32000 |
| 45 | CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը | դրամ | 28000 |
| 46 | Սնուցման բլոկի փոխարինում | դրամ | 22000 |
| 47 | Մարտկոցով (առանց լարի) ստեղնաշարի փոխարինում ներառյալ մկնիկը | դրամ | 13000 |
| | **Մոնիտորի** | | |
| 48 | Դիագնոստիկա | դրամ | 0 |
| 49 | Մոնիտորի մատրիցայի լուսավորման լամպի փոխարինում | դրամ | 8000 |
| 50 | Վերանորոգում՝ ներառյալ վնասված մասերը | դրամ | 15000 |
| | **Նոթբուքի (Dell Latitude 5580, Dell Vostro 15 3568)** | | |
| 51 | Դիագնոստիկա | դրամ | 3000 |
| 52 | Նոթբուքի փոշեմաքրում | դրամ | 8000 |
| | Վնասված մասերի վերանորոգում | | |
| | Որից՝ | | |
| 53 | Լիցքավորող սարքի հոսանքալարի փոխարինում | դրամ | 5000 |
| 54 | DVD-RW փոխարինում | դրամ | 12000 |
| 55 | Սնուցման շղթայի վերանորոգում | դրամ | 20000 |
| 56 | USB պորտի, ցանցային քարտի, միկրոֆոնի, ականջակալի բնիկների փոխարինում | դրամ | 15000 |
| 57 | Ներքին սնուցման աղբյուրի փոխարինում | դրամ | 15000 |
| 58 | Մատրիցայի փոխարինման աշխատանք | դրամ | 10000 |
| 59 | Մատրիցայի և հաղորդալարի փոխարինում | դրամ | 55000 |
| 60 | Ստեղնաշարի փոխարինում | դրամ | 25000 |
| 61 | Հովացուցիչի փոխարինում | դրամ | 15000 |
| 62 | Սնուցման բլոկի վերանորոգում | դրամ | 5000 |
| 63 | Սնուցման բլոկի փոխարինում՝ ներառյալ սնուցման բլոկը | դրամ | 16000 |
| 64 | Պրոցեսորի փոխարինում՝ ներառյալ պրոցեսորը | դրամ | 60000 |
| 65 | HDD 500 GB փոխարինում HDD 1TB-ով | դրամ | 28000 |
| 66 | SSD 120 GB փոխարինում SSD 120 GB-ով | դրամ | 15000 |

| | | | |
|---|---|---|---|
| 67 | SSD 240 GB փոխարինում SSD 240 GB-ով | դրամ | 22000 |
| 68 | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12V 7A | դրամ | 45000 |
| 69 | Սարքավորման ամբողջ ծրագրային ապահովման վերականգնում | դրամ | 12000 |
| | **Նոթբուքի (HP ProBook 450 G7,HP EliteBook 360 1040 G6 )** | | |
| 70 | Դիագնոստիկա | դրամ | 3000 |
| 71 | Նոթբուքի փոշեմաքրում | դրամ | 8000 |
| | Վնասված մասերի վերանորոգում | | |
| | Որից՝ | | |
| 72 | Լիցքավորող սարքի հոսանքալարի փոխարինում | դրամ | 5000 |
| 73 | Սնուցման շղթայի վերանորոգում | դրամ | 20000 |
| 74 | USB պորտի, ցանցային քարտի, միկրոֆոնի, ականջակալի բնիկների փոխարինում | դրամ | 15000 |
| 75 | Ներքին սնուցման աղբյուրի վերանորոգում | դրամ | 15000 |
| 76 | Մատրիցայի փոխարինման աշխատանք | դրամ | 10000 |
| 77 | Մատրիցայի և հաղորդալարի փոխարինում | դրամ | 55000 |
| 78 | Ստեղնաշարի փոխարինում | դրամ | 25000 |
| 79 | Հովացուցիչի փոխարինում | դրամ | 15000 |
| 80 | Սնուցման բլոկի վերանորոգում | դրամ | 5000 |
| 81 | Սնուցման բլոկի փոխարինում՝ ներառյալ սնուցման բլոկը | դրամ | 16000 |
| 82 | Պրոցեսորի փոխարինում՝ ներառյալ պրոցեսորը | դրամ | 60000 |
| 83 | SSD 256 GB փոխարինում SSD 256 GB-ով | դրամ | 24000 |
| 84 | SSD 512 GB փոխարինում SSD 512 GB-ով | դրամ | 36000 |
| 85 | Ղեկավարող սալիկի վերանոնոգում | դրամ | 25000 |
| 86 | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12V 7A | դրամ | 45000 |
| 87 | Սարքավորման ամբողջ ծրագրային ապահովման վերականգնում | դրամ | 12000 |
| | **Անխափան սնուցման սարք** | | |
| 88 | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը | դրամ | 10000 |
| | **Պրոյեկտոր** | | |
| 89 | Դիագնոստիկա | դրամ | 5000 |

| | | | |
|---|---|---|---|
| | **Սվիչ** | | |
| | Վերանորոգում կամ փոխարինում 5, 8, 16 port | | |
| | Որից՝ | | |
| 90 | 5 port սվիչ | դրամ | 5500 |
| 91 | 8 port սվիչ | դրամ | 7000 |
| 92 | 16 port սվիչ | դրամ | 14000 |
| | **HDD Արտաքին հիշողության սարք** | | |
| 93 | HDD Արտաքին հիշողության սարքի փոխարինում 1TB | դրամ | 29000 |
| **Ընդամենը** | | | **1429000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մրցակցության պաշտպանության
հանձնաժողով
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ազատ Կոյումջյան» ԱՁ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ավանեսովի 2/25
«Արարատբանկ»
Հ/Հ 1510022726810100
ՀՎՀՀ 23168191

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«10» փետրվարի 2025թ. կնքված*
*ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/10 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50311120/1 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | - | 90 000 | 90 000 | 202 500 | 202 500 | 202 500 | 315 000 | 315 000 | 315 000 | 450 000 | 450 000 | 450 000 | 450 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մրցակցության պաշտպանության
հանձնաժողով
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ազատ Կոյումջյան» ԱՁ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ավանեսովի 2/25
«Արարատբանկ»
Հ/Հ 1510022726810100
ՀՎՀՀ 23168191

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*«10» փետրվարի 2025թ. կնքված*
*ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/10 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրիկողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելուվայրը _____ | գտնվելուվայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « »« » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցվածծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.S. | Կ.S. |

*Հավելված 3.1*
*«10» փետրվարի 2025թ. կնքված*
*ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/10 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏՆ

պայմանագրիարդյունքըՊատվիրատուինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվումէ,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
ՊատվիրատուիանունըԿատարողիանունը

(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն